ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

01.11. 2017թ
N_52_

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԸ-Ն Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ,

Ձեզ ենք ներկայացնում Դաշտաքար համայնքի 26.10.2017 թվականի ավագանու թիվ 10 նիստի արձանագրությունը:

Համայնքի ղեկավար Ն. Մալխասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

2017 թ-ի հոկտեմբերի 26-ին, ժամը 11-ին, Դաշտաքար համայնքում տեղի ունեցավ ավագանու թիվ 11 նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Անգին Սարգսյան

Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ Հ. Հակոբյանը
Նիստը նախագահում էր Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյանը
Նիստը քարտուղարում էր աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյանը

## Օրակարգում

1. Օրակարգը հաստատելու մասին հարցը
2. Համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.
3. Համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալությամբ տրամադրելու համար համաձայնություն տալու մասին հարցը
4. Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին

1. Լսեցին - Նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը.

/Զեկ.Ն.Մալխասյանը /

Արտահայտվեցին ավագանու անդամներ Աբրահամ Աբրահամյանը, Արմեն Աթոյանը և Արամ Մալխասյանը

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները, որոնք իրենց խոսքում պաշտպանեցին համայնքի ղեկավարի առաջարկությունը
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով
Դաշտաքարի ավագանին որոշեց.

## ՈՐՈՇՈՒՄ 25

Հաստատել 26.10.2017 թվականի ավագանու նիստի օրակարգը.

1. Օրակարգը հաստատելու մասին հարցը
2. Համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.
3. Համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալությամբ տրամադրելու համար համաձայնություն տալու մասին հարցը

Որոշումն անցավ միաձայն

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

2. Լսեցին— Համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.

(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Արտահայտվեցին ավագանու անդամներ Անգին Սարգսյանը, Լյուդվիգ Այնազյանը և Արամ Մալխասյանը

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները.
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով
Դաշտաքարի ավագանին որոշեց.

*ՈՐՈՇՈՒՄ 26*

1. Համայնքի պահուստային ֆոնդի պահուստային միջոցներ գործառնական ծրագրի 4891 հոդվածից 30 000 դրամ հատկացնել Գույքի նկատմամբ իրավունքների գրանցում գործառնական դասակարգման ծրագրի 4823 հոդվածին
2. Համայնքի պահուստային ֆոնդը սահմանել 1 240 341.3 ՀՀ դրամ:

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

3. Լսեցին -- Համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ տրամադրելու համար համաձայնություն տալու մասին հարցը .

/Զեկ.Ն.Մալխասյանը /

Արտահայտվեցին ավագանու անդամներ Արամ Մալխասյանը, Աբրահամ Աբրահամյանը և Արմեն Աթոյանը
Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 14.01.2010թ-ի N 16-Ն որոշման պահանջներով.
Դաշտաքարի ավագանին որոշում է

# ՈՐՈՇՈՒՄ 27

1. Տալ համաձայնություն Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 600 (վեց հարյուր) հա մակերեսով հողատարածքը տրամադրել վարձակալության 10 տարի ժամկետով:

1.2. Մեկնարկային գինը սահմանել՝ 1 հա-ի համար կադաստրային զուտ եկամտի 15 տոկոսի չափ:

/Զեկ.Ն.Մալխասյանը /

Լսեցին -- Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելվածի

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով՝
Դաշտաքար համայնքի ավագանին որոշում է.

# ՈՐՈՇՈՒՄ 28

1. Հաստատել 2018 թվականի աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:

Ավարտելով հաստատված օրակարգի հարցի քննարկումները՝ համայնքի ղեկավարը հանդես եկավ հայտարարությամբ և նիստը հայտարարեց փակված:

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյան

Աշխ. քարտուղար՝ Ա.Վարդանյան